ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ

ՀՐԱՄԱՆ

«25» 07 2023 թ. Թիվ 201-Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 6-Ի ԹԻՎ 145-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասով, 34-րդ հոդվածի 1-ին մասով և «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով.

Հրամայում եմ.

1. Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի նախագահի 2022 թվականի սեպտեմբերի 6-ի «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի գործավարության կարգը, գործավարությունում օգտագործվող ձևաթղթերի և մատյանների ձևերը, Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի իրավական ակտերի նախագծերի մշակման, շրջանառման, իրավական ակտերի հաշվառման, իրազեկման կարգը և Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի կնիքների, դրոշմակնիքների շրջանառության կարգը հաստատելու մասին» թիվ 145-Լ հրամանի (այսուհետ՝ հրաման) 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված N 1 հավելվածի 49-րդ կետի երկրորդ նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Կոմիտեի անձնակազմին վերաբերող անհատական իրավական ակտերին Կոմիտեի անձնակազմի կառավարման վարչության կողմից էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգով իրազեկվում են այն անձինք, որոնց վերաբերելի է իրավական ակտը, որից հետո դրանք հաշվառվում և պահվում են Կոմիտեի անձնակազմի կառավարման վարչությունում:»:

2. Հրամանի 1-ին կետի 4-րդ ենթակետով հաստատված N 4 հավելվածի (այսուհետ՝ հավելված) Ձև N 1 աղյուսակի 1-ին կետի 1-ին ենթակետի 2-րդ սյունակից հանել «միջազգային հարցումներին առնչվող փաստաթղթերը,» բառերը:

3. Հավելվածի Ձև N 1 աղյուսակի 1-ին կետում՝ 2-րդ ենթակետից հետո, լրացնել հետևյալ բովանդակությամբ 2.1-ին ենթակետ.

«

2.1)	Կնիքը շրջանաձև է, տրամագիծը՝ 40 միլիմետր, կենտրոնում՝ Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերը, շրջանագծի երկայնքով՝ «ՀՀ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԲԱԺԻՆ» գրառումը՝ հայերեն, ռուսերեն, անգլերեն լեզուներով.	Օգտագործվում է միջազգային հարցումներին առնչվող փաստաթղթերը վավերացնելու նպատակով:	Կոմիտեի միջազգային հարցումների ապահովման բաժնի պետ

»:

4. Հավելվածի Ձև N 1 աղյուսակի 1-ին կետի 1-ին սյունակում՝ 12.1-ին ենթակետից հետո, լրացնել հետևյալ բովանդակությամբ 12.2-րդ ենթակետ.

«12.2) Կնիքը շրջանաձև է, տրամագիծը՝ 40 միլիմետր, կենտրոնում՝ «ՓԱԹԵԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ» գրառումը, շրջանագծի երկայնքով՝ «ՀՀ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՀԱՏԿԱՊԵՍ ԿԱՐԵՎՈՐ ԳՈՐԾԵՐԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ» գրառումը.»:

5. Հավելվածի Ձև N 1 աղյուսակի 2-րդ կետի 1-ին սյունակում՝ 1.1-ին ենթակետից հետո, լրացնել հետևյալ բովանդակությամբ 1.2-րդ ենթակետ.

«1.2) Դրոշմակնիքը ուղղանկյուն է, երկարությունը 55 միլիմետր, լայնությունը 23 միլիմետր, ուղղանկյան ներսում՝ «ՀՀ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՀԱՏԿԱՊԵՍ ԿԱՐԵՎՈՐ ԳՈՐԾԵՐԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ» գրառումը, չորրորդ տողում՝ «ՄՏԻՑ N» գրառումը, գիծ, հինգերորդ տողում՝ ամիս-ամսաթիվը.»:

6. Հավելվածի Ձև N 1 աղյուսակի 2-րդ կետի 1-ին սյունակում՝ 14.1-ին ենթակետից հետո, լրացնել հետևյալ բովանդակությամբ 14.2-րդ ենթակետ.

«14.2) Դրոշմակնիքը ուղղանկյուն է, երկարությունը 55 միլիմետր, լայնությունը 23 միլիմետր, ուղղանկյան ներսում՝ «ՀՀ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՀԱՏԿԱՊԵՍ ԿԱՐԵՎՈՐ ԳՈՐԾԵՐԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ» գրառումը, չորրորդ տողում՝ «ԵԼԻՑ N» գրառումը, գիծ, հինգերորդ տողում՝ ամիս-ամսաթիվը.»:

7. Սույն հրամանն ուղարկել Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի նախագահի տեղակալներին, խորհրդականներին, գլխավոր քարտուղարին, առաջին բաժնի պետին, հիմնական և աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների պետերին:

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Վ. ՄԵՍՐՈՊՅԱՆ